

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ռ Շ Ռ Ի Մ 22/7

7 մայիսի 2013թ.

Քննարկվեց <Եվրոպական բժշկական կենտրոն-ԱՊ> ՍՊԸ 25.04.2013թ. գրությամբ բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ Կենտրոնի <Տ կողմից պետական տուրքի գծով 1.014.000 դրամ առաջադրելու վերաբերյալ:

<Եվրոպական բժշկական կենտրոն-ԱՊ> ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) գանգատում մասնավորապես նշված է.

«ԿԱ ՊԵԿ Կենտրոնի Հարկային Տեսչությունում հաշվառված <Եվրոպական Բժշկական Կենտրոն-ԱՊ> ՍՊԸ նկատմամբ հաշվարկվել է պետական տուրքի գծով 1014000 (մեկ միլիոն տասնչորս հազար) դրամ պարտավորություն: Նշված պարտավորությունն առաջացել է ընկերությանը պատկանող բժշկական հաստատության շենքում բռնկված հրդեհից հետո, ընկերության կողմից գործունեություն չիրականացնելու ժամանակաշրջանում: Հրդեհը տեղի է ունեցել 2008թ. փետրվարի 9-ին:

Հաշվի առնելով, որ գործունեության չձավալումը կապված է եղել անհաղթահարելի ուժի առաջացման հետևանքով և նույն հիմքով էլ լիցենզիայի գործունեությունը դադարեցվել է, խնդրում են պետական տուրքի գծով 1014000 դրամ չափով պարտավորությունը դադարեցնել:

Կից ներկայացվում է «Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի գրությունը:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Առողջապահության նախարարության կողմից 2006 թվականի սեպտեմբերի 3-ին <Եվրոպական բժշկական կենտրոն-ԱՊ> ՍՊԸ-ին, որի գործունեության վայրն է հանդիսացել Երևան քաղաքի Վ.Սարգսյան փողոցի 3/1 հասցեում գտնվող տարածքը, բժշկական օգնության և սպասարկման որոշ տեսակներ իրականացնելու համար տրամադրվել է Կ-XX-000764 լիցենզիան:

2008 թվականի փետրվարի 9-ին <Եվրոպական բժշկական կենտրոն-ԱՊ> ՍՊԸ-ին պատկանող բժշկական հաստատության շենքում բռնկված հրդեհի հետևանքով վնասվել են ընկերությանը պատկանող տարածքը և գույքը, որի հետևանքով ընկերությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի վնաս և ընկերությունը փաստացի դադարեցրել է գործունեությունը:

Ընկերության կողմից 2012 թվականի ապրիլի 11-ին առողջապահության նախարարություն մուտքագրված դիմումի հիման վրա 2012 թվականի ապրիլի 23-ին «Առողջապահության նախարարի թիվ 876-Ա հրամանով Կ-XX-000764 լիցենզիայի գործողությունը <Լիցենզավորման մասին> «Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով դադարեցվել է:

<Եվրոպական բժշկական կենտրոն-ԱՊ> ՍՊԸ-ն 2008 թվականի փետրվարի 9-ից մինչև 2012 թվականի ապրիլի 23-ը, այսինքն՝ հրդեհի բռնկման օրվանից մինչև լիցենզիայի գործողությունը դադարեցնելը, գործունեություն չի ծավալել ոչ իր մեղքով, իր կամքից անկախ հանգամանքներում, անհաղթահարելի ուժի առաջացման հետևանքով:

<Լիցենզավորման մասին> «Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենսդրական այլ ակտերով»:

Իր հերթին, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի. <Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով>:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ լիցենզավորման ենթակա գործունեությունն անհնար է եղել իրականացնել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքներ առաջանալու պատճառով, իսկ պետական տուրքի մասով պարտավորություններն առաջացել են լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար տրված լիցենզիայի գծով, հետևապես ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից ընկերության նկատմամբ պետական տուրքի գծով հաշվարկված պարտավորությունը՝ գումարով 1.014.000 դրամ, ենթակա է նվազեցման ընկերության անձնական հաշվի քարտից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

<Եվրոպական բժշկական կենտրոն> ՍՊԸ 25.04.2013թ. գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից պետական տուրքի գծով 1.014.000 դրամ առաջադրելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵԴՅԱՆ